

82

ՅՐԱՆՍԱՅԻ ՀԱՅ ՍԿԱՌԻՏՆԵՐ

87



ՍԿԱՌԻՏԻՆ
ՈՒՂԵՑՈՅՑԸ

Տպագրութիւն
Կ. Յ. ՆԵՐՍԷՍ
Փ ա ռ ի գ
1929

13

ՖՐԱՆՍԱՅԻ ՀԱՅ ՍԿԱՌԻՏՆԷՐ



ՍԿԱՌԻՏԻՆ
ՈՒՂԵՑՈՅՑԸ

Տպագրութիւն
Կ. Ս. ՆՆՐԱՆՍ
Պ Ե Ր Կ
1 9 2 2

சென்னை

பெரிய

பெரிய

Սիրելի սկսուս եղբայրս,

Ահա քու ուղեցոյցդ, զոր խօսացած էի քեզի. զայն պատաստեցիս արեւի դարացնելու համար քու աշխատանքի. սալով քեզ հայտնեցի քիբ քեզ:

Այս քիբը կը պարունակէ այն բոլոր օրէնքները, որոնց դուն պիտի հնազանդիս եւ բոլոր ծաւօթութիւնները որոնք հարկաւոր են քեզ, «բարձրանալու համար» եւ հասնելու սկսուսակաւ Իսթաշիւ: Հոն պիտի գտնես պայմաններ, որոնք շրջանով պիտի հասնիս սկսուսակաւ ամենաբարձր աստիճանի, եւ այն ատեն կրնաս քեզ վրայ նայիլ իբր ապագայ օգտակար հայ քեզ:

Հաճոյքով հնազանդե եւ հաճոյքով կատարե քու պատկանութիւններդ: Մեկ արեւի պէտք ունիս կարգապահ ըլլալու, եւ ինքնամիտման ձեռք կատարելու: Տանապա՛ զեղի քեզ զարայր եղար, եւ

ճակատի վրայ ժպիտէն առաջ վիշտը իր
հետքը թողուց: Բայց դուն անխախտ եւ.
քո հոգւոյդ ոյժովը հպարտ, երկաթեայ
կամփիղ վրայ վստահ՝ դուն Մեծ ճիգը պիտի
ընես: Եւ վաղը երբ մեր ազասագրուած
հայրենիքը իր զաւակները կանչէ նու-
իրուելու Հայ Իսթաշիւն, մենք բոլորս
ժպտուն, պարզած մեր բազուկները Մա-
ւիսիւն, պիտի կոչեմք: «ՄԻՇՏ ՊԱՏՐԱՍ»

Փետրուար 1929

ԳՈՒՐԳԷՆ ՄԵԾԱՏՈՒՐԵԱՆ



ՄԿԱՌԻՏԻՆ

ԽՕՍՏՈՒՄԸ

- Պաստոյս վրայ կը խօսանամ՝
- Ըլլալ հաւասարիմ Աստուծոյս եւ ծառայել Հայրենիքիս:
 - Մի՛ս օգնել ուրիշին:
 - Հնազանդիլ սկառսական դաւանանքին:



[Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page]

ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԴԱԻԱՆԱՆՔԸ



- 1.— Սկանոսին խօսքը նուիրական է:
- 2.— Սկանոսը կը հնազանդի իր ծնողքին եւ իր աստիճանաւորներուն:
- 3.— Սկանոսը հաւասարիմ եւ ուղղամիտ է:
- 4.— Սկանոսը միշտ կ'օգնէ ուրիշներուն:
- 5.— Սկանոսը բարեկամ է ամէնուն եւ եղբայր ամէն ուրիշ սկանոսի առանց ընկերական կարգի խտրութեան:
- 6.— Սկանոսը բարեկիրթ է եւ ասպետական:
- 7.— Հայ սկանոսը մահուր հայերէն կը խօսի:
- 8.— Սկանոսը անասունները կը պաշտպանէ եւ կը սիրէ:
- 9.— Սկանոսը միշտ զուարթ եւ խանդավառ է:
- 10.— Սկանոսը աշխատասէր եւ կորովի է:
- 11.— Սկանոսը սնեցող է:
- 12.— Սկանոսը մահուր է մտածումով, խօսքով եւ գործով:

1841/1842

1. —
2. —
3. —
4. —
5. —
6. —
7. —
8. —
9. —
10. —
11. —
12. —

ՇԱՐՔԵՐ ԵՒ ՀԱՄԱԶԳԵՍՏ

ՇԱՐՔԵՐ.— Սկառուտական շարժուժը երեք շարքերէ կը բաղկանայ. Ա) Գայլուկներ Բ) Սկառուտներ Գ) Երէցներ:

Գ Ա Յ Լ Ո Ւ Կ Ն Ե Ր



ՆՇԱՆԱԿ.— Գայլուկները իրենց գլխարկին վրայ կը կրեն գայլուկի գլուխ մը, կտաւէ շինուած: Միեւնոյն նշանակէն կը կրեն նաև իրենց ձախ կուրծքին վրայ: Նշանակը իրենց կը լանձնուի խմբապետուհիին կողմէ: Գայլուկներու համազգեստը հետեւեալն է:

ԳԼԽԱՐԿ.— Ֆրանսական գտակ (béret) գոց կապոյտ, որուն ճակատին վրայ կը կարուի նշանակը:

ՎԶԿԱՊ.— Խոււքին գոյնը, քառակուսի և ծայրը հանգուցուած:

ՇԱՊԻԿ.— Բուրդէ, գոց կապոյտ և կանանչ:

ԳՈՒԼՊԱՅ.— Գոց կապոյտ, կանանչ — նախընտրելի է բուրդէ շինուածը:

ԿՕՇԻԿ.— Դեղին կամ սեւ և կաշիէ:

ՊԱՅՈՒՍԱԿ.— Կոնակի պայուսակ և օղակ-
ներով, ծածկոցը վրան կապելու համար:

ՈՒՍՆՈՅ.— Եռանկիւն և վեցնեակին գոյնով
ձախ թելին վրայ, ուսէն անմիջապէս վար:

ՆՇԱՆԱԿՆԵՐ.— Մասնագիտական նշանակ-
ները կը կարուին աջ թելին վրայ:

Ա Ս Տ Ի Ճ Ա Ն Ն Ե Ր

ՓԱՓՈՒԿ ԹԱԹԻԿ.— Գայլուկ արձանա-
գրուելու համար պէտք է 8—12 տարեկան
ըլլալ. գիտնալ և բացատրել գայլուկին օրէնքը
և բարեւը: Արձանագրուած գայլուկը հետեւեալ
խօստուամբ կ'ընէ.—

— Կը խօստանամ կարելիս ընել, — ըլլալու
համար հաւատարիմ Աստուծոյս և ծառայե-
լու հայրենիքիս: — Հնազանդիլ գայլուկնե-
րուն օրէնքին և ամէն օր բարի գործ մը կա-
տարել:

Գայլուկներուն դաւանանքը հետեւեալն է.

1. Գայլուկ մը միշտ մտիկ կ'ընէ ծեր գայլը:

2. Գայլուկ մը բնաւ մտիկ չ'ընէր ինքզինքը:

Այս խօստուածքը ընելէն յետոյ արձանագրուած գայլուկը կը ստանայ իր նշանակը:

ԱՌԱՋԻՆ ԱՍՏՂ.— Առաջին աստղը կրելու համար գայլուկ մը պէտք է՝

ա) Ճանչնայ եւ բացատրէ հայկական դրօշակը:

բ) Գիտնայ, օղակ, ջուլհակ և գերան կապերը:

գ) Նետել և բռնել (վարժ կերպով) գնդակ մը:

դ) Գիտնայ թէ ինչո՞ւ պէտք է մաքուր պահել ոտքերը և ձեռքերը, մաքրել եղունգները և ակոսները: Գիտնայ թէ ինչո՞ւ պէտք է քիթով շնչել:

ե) Գիտնայ ժամացոյց նայիլ:

զ) Առնուազն երեք ամսուայ փափուկ թաթիկ ըլլայ:

Առաջին աստղը կը ստացուի խմբապետուհիէն և կը դրուի գլխարկի նշանակին աջ կողմը:

ԵՐԿՈՒ ԱՍՏՂ.— Երկու աստղ կրելու համար գայլուկ մը պէտք է՝

ա) Գիտնայ Մորսի եւ Սէմաֆօրի այբուբենը:

բ) Ճանչնայ կողմնացոյցին 8 մասերը:

դ) Գիտնայ «Մեր Հայրենիք»ին առաջին երկու տուները:

դ) Իր կողմէ շինուած ձեռական աշխատութիւն մը ներկայացնել:

ե) Գիտնայ ներկել իր կօշիկը և խոզանակել հագուստները, վառել և մարել լոյս մը:

զ) Քալել եւ վազել գիտնայ:

է) Գիտնայ աղտոտութեան վնասները և մաքրել եղունքները:

ը) Առնուազն վեց ամսուան մէկ աստղաւոր գայլուկ ըլլայ:

Երկրորդ աստղը կը ստացուի խմբապետուհիէն և կը դրուի գլխարկի նշանակին ձախ կողմը:



ՓՈՒ ՎԵՑՆԵԱԿԱՊԵՏ.— Փոխ վեցնեակապետ մը օգնականն է վեցնեակապետին — ձախ թևին վրայ կը կրէ դեղին երիզ մը:

ՎԵՑՆԵԱԿԱՊԵՏ.— Վեցնեակապետ մը կը նշանակուի խմբապետուհիին կողմէ. պարտականութիւնն է կառավարել վեց գայլուկներ: Վեցնեակապետը երկու երիզ կը կրէ իր ձախ թևին վրայ. (Արմուկէն 1 սանթիմէթր վեր):

կու երիզ կը կրէ իր ձախ թևին վրայ. (Արմուկէն 1 սանթիմէթր վեր):

ԱՒԱԳ ՎԵՑՆԵԱԿԱՊԵՏ.— Խմբապետուհին կը նշանակէ աւագ վեցնեակապետը, հետեւելով հետեւեալ կէտերուն.

ա) Ըլլալ առնուազն մէկ տարուան զալլուկ:

բ) Ըլլալ առ նուազն վեց ամսուան վեցնեակապետ:

գ) Երկու աստղաւոր զալլուկ ըլլալ:

Աւագ վեցնեակապետը երեք դեղին երիզ կը կրէ ձախ թեւին վրայ:

Ս Կ Ա Ո Ւ Տ Ն Ե Ր

ՆՇԱՆԱԿ.— Ֆրանսայի հայ սկաուտը քաղաքային հագուստով եղած ժամանակ իր միութեան նշանակը կը կրէ ձախ լամբակին վրայ: Սոյն նշանակը կը ստացուի խմբապետէն, որը կրելու համար սկաուտը պէտք է ունենայ իր սկաուտական ինքնութեան տոմար: Հրաժարման պարագային սոյն նշանակը պէտք է ետ վերադարձուի:



ԳԼԽԱՐԿ.— Սկաուտը կը կրէ պօէր լայնեզր գլխարկ եզերքը կաշիով:

Վ.Զ.ԿԱՊ.— Խումբին գոյնովը կտաւ և ծայրը երկու հանգոյց:

ՇԱՊԻԿ.— Թխագոյն (kaki) երկու գրպանով, ուսնոցով և թեւերը միշտ վեր դարձած:

ԳՕՏԻ.— Կաշիէ և նշանակով:

ԳՈՒԼՊԱՅ.— Գոց կապոյտ բուրդէ գուլպայ կանանչ երիզներով:

ԿՕՇԻԿ.— Պարզ, սեւ կամ թուխ:

ՊԱՅՈՒՍԱԿ.— Կոնակի պայ-
ուսակ պարտաւորիչ:

ԳԱՒԱԶԱՆ.— Մէկ մէթը վաթսուն երկարութեամբ, չափերը բաժնուած և անունը արձանագրուած:

ՈՒՍՆՈՑ.— Խմբակային երիզները ձախուսէն կախած, ինչպէս նաև հայկական դրօշակին երիզները ձախ ուսնոցին վրայ: Իսկ աջ ուսնոցին վրայ կը դրուի՝ «Հայ Սկաուտներ» մակագրութիւնը:

ԶՄԵԼԻ.— Կամաւոր է գործածութիւնը եւ կը կախուի գօտիին ձախ կողմի օղակէն:

ՍՈՒԼԻՉԻ ԿԱՊ.— Ճերմակ և սուլիչը ձախ գրպանը:

ՎԵՐԱՐԿՈՒ.— Գործածութիւնը կամաւոր է:



ՆՈՐՐՆԾԱՅ

Սկսուտ ըլլալու համար պէտք է թեկնածուն 11—18 տարեկան ըլլայ. նորընծայ ըլլալու համար պէտք է թեկնածուն գիտնայ՝

ա) Խօստուժն ու դաւանանքը և բացատրէ զանոնք:

բ) Սկսուտական բարեքերը, հայկական դրօշակը, վեց նախնական կապերը և հետախուզական նշանները:

գ) Սկսուտական շարքերը և աստիճանները: Նորընծայ սկսուտը խօստուժը կ'ընէ և կը կրէ նորընծայ սկսուտի նշանակը և սկսուտական հագուստը:

Բ. ԿԱՐԳԻ ՍԿԱՌԻՏ

Երկրորդ կարգի սկսուտ ըլլալու համար նորընծան պէտք է՝

ա) Առնուազն երկու ամսուան նորընծայ ըլլայ:

բ) Գիտնայ մարդակազմութիւնը, և նախնական դարման (ոսկրաբեկում, արիւնահոսութիւն, արկածներ, վէրքեր և կապելը): Շինել պատգարակ մը և գիտնալ հիւանդ փոխադրելու միջոցները:

զ Մօրսի կամ Սէմաֆօրի այբուբենը գիտնալ և խօսիլ դրօշակով:

դ) Քիմի պատմութիւնը գիտնալ, և 24 զանազան առարկաներ մէկ վայրկեան դիտելէ վերջ գրել զանոնք (առնուազն 16 հատ):

ե) Քառորդ ժամէն երկու քիլօմէթր կտրել սկառտական քայլով:

զ) Կրակ վառել և մսեղէն կերակուր մը եփել:



է) Կողմնացոյցին 16 կողմերը գիտնալ. գիտնալ նաեւ արեւին և լուսինին միջոցաւ առաջնորդուիլ:

Բ. կարգի սկառտը իր նշանակը կը կրէ ձախ թեւին վրայ, սւսին և արմուկին մէջտեղը: Նշանակը կը ստանայ խմբապետէն:

Ա. ԿԱՐԳԻ ՍԿԱՌԻՏ

Առաջին կարգի սկառտը ըլլալու համար Բ. կարգի սկառտը պէտք է անցնէ հետեւեալ պայմանները, գործադիր խորհուրդին կողմէ նշանակուած քննիչի մը առջեւ:

ա) 50 մէթր լողալ, իսկ պայմաններու բերմամբ անկարելութեան ժամանակ ունենալ կարմիր խաչի, կամ դրօշախօսի պէճը:

բ) Սահուն կերպով խօսիլ մօրսով կամ սէմաֆօրով. գիտնալ ընդհանուր խօսքերը:

դ) Հեռաւորութիւն, բարձրութիւն և ծանրութիւն դատել հարիւրին 25 սխալով:

ե) կարմիր Խաչի պէճը ունենալ:

զ) Երեք տեսակ կերակուր եփել:

է) Ստալակոյտի քարտէսը կարդալ եւ առաջնորդուիլ անկէ:

ը) ձեռական աշխատութիւն մը ներկայացընել:

թ) 10 վայրկեանէն 2 քիլօմէթր կտրել սկառտական գնացքով:

ժ) Թեկնածու մը ներկայացնել և նորընծայի քըննութեան պատրաստել զայն:

ի) 25 քիլօմէթր ճամբորդութիւն մը կատարել, մէկ գիշեր բանակելով և վերադարձին տեղեկագիր մը տալ:

Ա. կարգի նշանակը ձախ թեւին վրայ կը կարուի Բ. կարգի նշանակէն 1 սմթր. վեր:



ՎԿԱՅԵԱԼ ՍԿԱՌԻՏ

Վկայեալ սկառուտ ըլլալու համար Ա. կարգի սկառուտը հետեւեալ պայմանները պէտք է լրացնէ:

ա) Մէկ տարուան սկառուտ ըլլալ:



բ) Ունենալ վեց մասնագիտական վկայական (badge), որոնցմէ երեքը պէտք է ըլլան՝ կարմիր խաչ, հեծելանուորդ, թարգման, և կամ հետախոյզ:

Վկայեալ սկառուտը իր աջ ուսէն անցուած կ'ունենայ կանանչ - դեղին երիզ մը (cordon):

ԱՐԱՐԱՏԵԱՆ ՍԿԱՌԻՏ

«Արարատեան սկառուտ»-ի աստիճանը ունենալու համար, վկայեալ սկառուտը հետեւեալ պայմանները պէտք է լրացնէ՝

ա) Առնուազն երկու տարուան սկառուտ ըլլալ:

բ) 12 մասնագիտական վկայականներ ունենալ որոնց վեցը պէտք է ըլլան՝

կարմիր խաչ, հետախոյզ, դրօշախօս, հեծելանուորդ, առողջապահ, ազատարար կամ թարգման և կամ հրշէջ:

գ) Իր ամբողջ սկառուութեան ընթացքին օրինակելի վարք ունեցած ըլլալ և մեծ ծառայութիւններ մատուցած ըլլալ սկառուական շարժման:

Արարատեան սկառուի նշանակը պէտք է կարուի ձախ թելին վրայ, Ա. կարգի սկառուի նշանակէն վեր:



Արարատեան սկառուի աստիճանը միայն գործադիր խորհուրդն է որ կուտայ, առաջարկութեամբ խումբին խմբապետին:

ՊԱՇՏՕՆՆԵՐ

ՓՈՒ ԱՌԱՋՆՈՐԴ. — Փոխ առաջնորդը կը նշանակուի իր առաջնորդին կողմէ. կ'օգնէ անոր խմբակին աշխատութեանց մէջ, և առաջնորդին բացակայութեան ժամանակ կը փոխանորդէ զայն:

Փոխ առաջնորդը իր ձախ գրպանին աջ կողմէն 1½ սնթմ. լայնութեամբ և 8 սնթմ. երկարութեամբ երիզ մը կը կրէ:

ԱՌԱՋՆՈՐԴ.— Առաջնորդին պաշտօնն է
դեկավարել խմբակը: Կը նշանակուի խմբա-
պետին կողմէ որը իր կարգին կը դիմէ կամ
“Պատուոյ Ատեան”ին կարծիքին և կամ խում-
բակին քուէարկութեան:

Առաջնորդը, փոխ առաջնորդին նման երկու
ճերմակ երիզ կը կրէ իր ձախ գրպանին վրայ:

ԱԻԱԳ ԱՌԱՋՆՈՐԴ.— Աւագ առաջնորդը կը
նշանակուի խմբապետին կողմէ որը նկատի
կ’առնէ թեկնածուին կարողութիւնները հե-
տեւեալ պայմաններուն մէջ՝

- ա) Ընդհանուր սկաուտական զարգացում:
- բ) Հրամայելու կարողութիւն:
- գ) Առնուազն վեց ամսուան առաջնորդա-
կան պաշտօն:

դ) Ա. կարգի սկաուտ:

Աւագ առաջնորդը երեք ճերմակ երիզ կը
կրէ իր ձախ գրպանին վրայ, իսկ ուսին
երիզները իր առաջին խմբակին գոյները կ’ըլլան:

ԵՐԷՑՆԵՐ (ROVERS)

ՀԱՄԱԶԳԵՍՏ.— Երէցները միեւնոյն հա-
մազգեստը ունին ինչ որ սկաուտները — հե-
տեւեալ տարբերութիւններով:

ԳԼԽԱՐԿ.— Գլխարկին վրայ կը կրեն R. S. գիրերը (Rover scouts)

ՈՒՍՆՈՑ.— Կանանչ ուսնոցներ կ'ուսնենան, որուն վրայ դեղին գիրերով գրուած է «Rovers»:

ՈՒՍԻ ԵՐԻՋ.— Կարմիր, կանանչ և դեղին:

ԳՈՒԼՊԱՅԻ ԵՐԻՋՆԵՐ.— Կարմիր:

ԱՍՏԻՃԱՆՆԵՐ.— Միեւնոյն աստիճանները ինչ որ սկաուտները ունին, միայն ճերմակ երիզներուն տեղ կարմիր:

Երէց սկաուտ մը պէտք է նախ Ա. կարգի ըլլայ եւ 18 տարեկան:

Երէցներուն պետք կ'ընտրուի խմբակին կողմէ, քուէարկութեամբ:

ՊԱՇՏՈՆԱՏԱՐՆԵՐ (OFFICERS)

ՀԱՄԱԶԳԵՍՏ.— Պաշտօնատարներու համագգեստը հետեւեալն է:

Բանակումի կամ արշաւներու համար սկաուտական պարզ հագուստ, իսկ իբր պաշտօնական.

ա) Թխագոյն շապիկ, խումբին գոյնէն փողկապ:

բ) Խազի վէսթօն, կաշիէ կոճակներով և ուսնոցներով:

գ) Ճերմակ կամ խազի օձիկ կանանչ փողկապով, կապոյտ գուլպայ կանանչ երիզներով:



ԽՄԲԱՊԵՏՈՒՀԻՆԵՐ. — Խմբապետուհիները կ'ուսնենան կապոյտ լայնեզր գլխարկ, գոց կապոյտ շրջազգեստ և շապիկ, փողկապ խուճբին գոյնէն:

ՊԱՇՏՕՆՆԵՐՈՒ ՆՇԱՆԱԿՈՒՄ. — Պաշտօնատարները կը նշանակուին գործադիր խոր-

հուրդին հաւանութեամբ, որ քննութիւն կը կատարէ նախ քան վաւերացնելը խմբապետի մը ընտրութիւնը: Իսկ շրջանային խմբապետը, կամ ընդհանուր պետը կը նշանակուին միայն գործադիր խորհուրդէն:

Երբ նշանակուած խմբապետ մը անկարող կամ անարժան կը դատուի շարունակելու իր վրայ դրուած պաշտօնը գործադիր խորհուրդը անմիջապէս կը հրաժարեցնէ զայն:

Գործադիր Խորհուրդէն նշանակուած բոլոր պաշտօնատարները պէտք է ունենան իրենց յատուկ վկայականը:

ԳԱՅԼՈՒԿԱՊԵՏ. — Գայլուկապետ մը կը նշանակուի ղեկավարելու համար գայլուկներու խումբ մը և կը կրէ խմբապետական նշանակ:

ՓՈԽ ԳԱՅԼՈՒԿԱՊԵՏ. — Կը նշանակուի գայլուկապետէն .պէտք է առնուազն 18 տարեկան ըլլայ:

ԽՄԲԱՊԵՏ. — Խմբապետ մը կը նշանակուի ղեկավարելու համար սկաուտական խումբ մը (տե՛ս “Կազմակերպական Օրէնքներ”): Պաշտօնատարի համազգեստ կը կրէ: Գլխարկին ձախ կողմը կ’ունենայ սկաուտական նշանակը կանանչ փետուրով, իսկ ձախ ուսին 15 սնթ. երկարութեամբ 4 ճերմակ երիզ:



ՓՈԽ ԽԱՐԱԿԵՏ.— Փոխ խմբապետին պաշտօնն է օգնել խմբապետին ղեկավարելու համար խուճաբ մը: Կը նշանակուի խմբապետին կողմէ և պէտք է առնուազն 18 տարեկան ըլլայ:


Փոխ խմբապետը զլխարկին ձախ կողմը կը կրէ միևնոյն նշանակը ինչ որ խմբապետը, միայն կարմիր փետուրով: Իսկ ձախ ուսին կ'ունենայ չորս կարմիր երիզ: Փողկապը կարմիր պէտք է ըլլայ և կամ խուճաբին գոյնէն:

ՉՐՋԱՆԱՅԻՆ ԽԱՐԱԿԵՏ.— Միեւնոյն շրջանին մէջ քանի խուճաբեր ըլլալու պարագային կը նշանակուի շրջանանյին խմբապետը. կ'ունենայ պաշտօնատարի համազգեստ, գրլխարկին ձախ կողմը կապոյտ փետուր և ձախ ուսին չորս կապոյտ երիզ:

ԸՆԴՀ. ՊԵՏ.— (Commissioner) Ընդհանուր պետը կը նշանակուի գործադիր խորհուրդին կողմէ: Պաշտօնատարի միեւնոյն հազուստը: Գլխարկին ձախ կողմը արծաթեայ սկաուտական նշանակ մանիշակագոյն փետուրով: Կանանչ փողկապ, եւ ձախ ուսնոցին վրայ մանիշակագոյն երիզ մը, մէկ ու կէս սմթրլայնութեամբ:

Ընդհանուր պետին պաշտօնները յիշուած են «Կազմակերպական Օրէնքներ» ուն մէջ:

Իր գլխաւոր պարտականութիւնն է ղեկավարել ը նդհանուր շարժումը. միայն ինքն է որ կրնայ լուծել սկասկտական խումբ մը գործադիր խորհուրդին հաւանութեամբ կամ վտարել սկսուտներ:



ՊԱՏՈՒՅՑ ՆԱՐՔԵՐ

ՊԱՏՈՒՅՑ ԱՆԴԱՄՆԵՐ.— Պատուոյ անդամները կը կրեն սկսուտական նշանակ:

ՔՆՆԻՉՆԵՐ.— Զանազան մասնագէտներ որոնք սկսուտական քննութիւններ անցնել կուտան, կը նկատուին իբր պատուոյ պաշտօնատարներ և կրնան կրել սկսուտական հագուստ:

ՀՈՎԱՆԱԻՈՐՈՂ ՄԱՐՄԻՆ.— Հովանաւորող մարմնին անդամները կը նկատուին իբր պատուոյ ընդհանուր պետեր և կրնան կրել համազգեստ:



ԽԱՌՆ ՕՐԷՆՔՆԵՐ

ԴՐԱՄԱԿԱՆ ԽՆԴՐԱՆՔ. — Սկառուտները պէտք է երբե՛ք դրամ՝ չխնդրեն զանազան անձերէ, այլ ջանան շահիլ զայն, սկառուտական պէտքերուն համար:

ԼՈԳԱՆՔ ԵՒ ԹԻԱՎԱՐԵԼ. — Սկառուտական հաւաքոյթներու ժամանակ սկառուտները պէտք է երբեք չթիափարեն կամ լողան, երբ խմբապետը ներկայ չէ: Իր ներկայութիւնը և արտօնութիւնը անհրաժեշտ է:

ԲԱՆԱԿՈՒՄ. — Բացարձակապէս արգիլուած է բանակումներ կատարել առանց հրաման առնելու. գործադիր խորհուրդէն: Բանակավայրին տիրոջ արտօնութիւնը անհրաժեշտ է:

ՀԱՆԴԷՍՆԵՐ. — Սկառուտները կրնան մասնակցիլ միայն ազգային և բարեգործական բնոյթ ունեցող հանդէսներու, արտօնութեամբ ընդհանուր պետին:

ԴՐՕՇԱԿ. — Հայ եռագոյնը սկառուտական պաշտօնական դրօշակն է և ամէն սկառուտ պէտք է յարգանք ունենայ անոր հանդէպ եւ բարեւէ, ամէն անգամ որ զայն պարզուած տեսնէ:

Իսկ ամէն խումբ կ'ունենայ իրեն յատուկ դրօշակը, խումբին գոյնով և սկաուտական նշանակով:

ԿԸՐԼ ԿԱՅՏԵՐ.— Կըրլ կայտերու (աղջիկ սկաուտներ) միութիւնը ոչ մէկ կապ ունի սկաուտական շարժման հետ և պէտք է երբեք միասին արշաւներ չկատարուին:

Փայլուկներ եւ Ծիծեռնակներ (աղջիկ գայլուկներ) կրնան միասին հաւաքուիլ, հաւանութեամբ ընդհանուր պետին:

ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ.— Ամէն նոր կազմուած խումբ պէտք է դիմէ գործադիր խորհուրդին վաւերական խումբ նկատուելու և բոլոր առաւելութիւններէն օգտուելու համար:

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ.— Սկաուտներուն բացարձակապէս արգիլուած է մասնակցիլ կուսակցական հաւաքոյթներու և կամ պատկանիլ քաղաքական կուսակցութեանց: Սկաուտութիւնը ազգային անկախ շարժում մըն է և իր բոլոր գործերը ազգային բնոյթ պէտք է ունենան:

Սկաուտը կուսակցական ըլլալէ առաջ նախ պէտք է հայ ըլլալ սորվի եւ անկախ կերպով զարգանայ:

ԲԱՐԵՒՆԵՐ.— Սկաուտները ունին երեք տեսակ բարեքներ.

1. Ամբողջ բարեւ: Բարեւելու աստիճանաւորները



Երբ սկսուոր առանց դաւադանի է.—
2. Գաւադանով բարեւ:



3. Քալած ժամանակ բարեւ:

Գայլուկները երկու մատով կը բարեւեն:



Սկառւտները իրար կը բարեւեն ձեռքերնին մինչեւ ուս բարձրացնելով. իսկ քաղաքային հազուստով իրարու ձախ ձեռքը կը սեղմեն: Սկառւտական բարեւը խօստոււմը կը յիշեցնէ: Սկառւտը զբաղուած ժամանակ միայն զլուխը կը դարձնէ բարեւելիք անձին կողմը և դէմքը ժպտուն:

ԹԱՏՐՈՆ. Սկառւտներուն արգիլուած է թատրոն կամ սինէմա երթալ սկառւտական հագուստով:

ԾԽԵԼ. — Սկառւտներուն արգիլուած է ծխել:

ՍԿԱՌԻՏՆԵՐ ԵՒ ԳԱՅԻՈՒԿՆԵՐ. — Սկառւտներ և գայլուկներ պէտք չէ որ միասին արշաւներ կամ բանակումներ կատարեն, նկատի առնելով այս երկու ճիւղերուն արմատական տարբերութիւնը:

ՀՐԱԺԱՐԵՑՈՒՄ ԵՒ ԿԱԽԱԿԱՅՈՒՄ.— Երբ սկսուտ մը կը թերանայ իր պարտականութեանց մէջ և կամ կը դաւաճանէ իր դաւանանքին, խմբապետը կը հեռացնէ սկսուտը ժամանակաւորապէս կամ վերջնական կերպով: Ընդհ. պետը կը գործադրէ սոյն որոշումը:



ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՆԵՐ

(BADGES)

Ն Պ Ա Տ Ա Կ

Ա. Մասնագիտական նշանակներուն նպատակն է պատանիին գործնական կարողութիւնները զարգացնել, արթնցնելով իր մէջ հետաքրքրութիւն՝ բոլոր օգտակար նիւթերու հանդէպ:

Բ. Մասնագիտական նշանակները պէտք է կրել աջ թեւին վրայ, բացի հետեւեալ հանրութեան օգտակար նշանակներէն որոնք պէտք է կրել շապիկը երկու թեւերուն վրայ:

Կարմիր խաչ, հեծեղանունորդ, հեսախոյզ, քարզման, ազատարար, հրշեջ, դրօշախօս, ֆլեկիչ-առողջապահ:

Գ. Մասնագիտական նշանակներու քննութիւնները կրնան անցնիլ միայն Բ. կարգի սկստուածները և երկու աստղ ունեցող զայլուկները, մասնաւոր քննիչի մը առջեւ:

Գ Ա Յ Լ ՈՒ Կ Ն Ե Ր

Գայլուկներուն մասնագիտական նշանակները երեք խումբի կը բաժնուին և տարբեր գոյներ կ'ունենան:

Ա. ԽՈՒՄԲ.— Նկարագիր: Նշանակի գոյն՝ կապոյտ:

Բ. ԽՈՒՄԲ.— Չեռական ճարտարութիւն: Նշանակի գոյն՝ դեղին:


Գ. ԽՈՒՄԲ.— Ծառայութիւն: Նշանակի գոյն՝ կարմիր

Նշանակ մը ստանալէ առաջ գայլուկ մը պէտք է հետեւեալ խօստումը ընէ.

«Կը խօստանամ իմ կարելիս ընել արժանի ըլլալու համար ստացած նշանակիս»:

ԱՌԱՋԻՆ ԽՈՒՄԲ.


ՀԱՒԱՔԻԶ.— Հաւաքիչի նշանակը ստանա-



լու համար գայլուկ մը պէտք է գեղեցիկ հաւաքածոյ մը ունենայ հետեւեալ առարկաներէն մէկէն. նամակադրոշմ, քարդ,

բնագիտական հաւաքածոներ:

ԴԷՏ.— Դէտի նշանակը ստանալու համար
 գայլուկ մը պէտք է ճանչնայ
 քսան տեսակ կենդանիներ կամ
 ծաղիկներ:




2. Հետք ճանչնալ և հետեւիլ:

3. Քիմի խաղին մէջ վարժ ըլլալ:

4. Խօստանալ միշտ կենդանիներուն բարիք
 ընել և պաշտպանել թռչունները և անոնց
 բոյները:

ԴՐՕՇԱԽՕՍ.— 1., Գիտնալ Մօրսի կամ
 Սէմաֆօրի այբուբենը:

2. Գիտնալ սուլիշով կամ
 լոյսով ընդհանուր նշաններ
 դրկել եւ ստանալ:




3. Գիտնալ մորսով խօսիլ կամայ բայց
 կանոնաւոր:

ԵՐԿՐՈՐԴ ԽՈՒՄԲ.


ԳԾԱԳՐԻԶ.— 1. Գծագրել մարդ մը կամ
 կենդանի մը:

2. նկարել փոքրիկ կենդանի
 տեսարան մը:

3. Սիրուն կերպով գծել մեծ
 և փոքր Մասիաները ներկով:




ՀԻՒՍՈՂ.— 1. Կողով մը շինել:



2. Չուանով օգտակար առարկայ մը հիւսել:

3. Բուրդ հիւսել գիտնալ:

ԿԱՀԱԳՈՐԾ.— 1. Փայտէ տուփ մը շինել:




2. Գամ մը զարնել և հանել գիտնալ:

3. Փայտէ ճեռական աշխատութիւն մը շինել:

ԵՐՐՈՐԴ ԽՈՒՄԲ.

Նշանաբան՝ «Միշտ օգնել ուրիշին»

ԿԱՐՄԻՐ ԽԱԶ.— Գիտնալ թէ ինչպէս պէտք է դարմանել պզտիկ վէրք մը:




2. Գիտնալ «պանտաժ» ով կապել:

3. Գիտնալ կասեցնել քիթի

արիւնահոսութիւնը:

4. Գիտնալ թէ ինչպէս պէտք է մարել այրուող հագուստ մը:

ՈՒՂԵՑՈՅՑ.— 1. Իր բնակած կեդրոնին մեծ ճամբաները գիտնալ և առաջնորդել օտարական մը:



2.— Քաղաքավար կերպով խօսիլ գիտնալ:

3. Բերանացի լուր մը տանիլ:

4.— Մօտակայ ոստիկանատուներ, բժշկին
տուներ և հրշէջներու գօրանոցը գիտնալ:


5. հեռաւորութիւն դատել:

ՏՆՏԵՍՈՂ. 1. Երկու լուցկիով կրակ վառել:

2. Թէյ եփել և հաւ կիթ խաշել:

3. Գետնախնձոր մաքրել:

4. Զոյգ մը կօշիկ մաքրել և
ներկել:



5. Անկողին շտկել, դանակ պատառաքաղ
և զգալ մաքրել գիտնալ:

Ս Կ Ա Ո Ւ Տ Ն Ե Ր

Սկառուտական մասնագիտական նշանակ-
ները գանազան խումբերու կը բաժնուին,
նկատի առնելով անոնց նպատակը:

ԲԱՆԱԿՈՒՄԻ ԿԵԱՆՔ.

ՉԵՌԱԿԱՆ ՃԱՐՏԱՐՈՒԹԻՒՆ.

(Սրճագոյն եղբ)

(Դեղին եղբ)

Աւրաշէն

Գծագրիչ

Բանակոդ

Դերձակ

Դրօշախօս

Ելեֆսրագիտ

Խոհարար

Երկրաչափ

Հետազոտ

Լուսանկարիչ

Կահագործ

ԱՐՈՒԵՍՏԱԳԻՏՏԿԵՆ. ԿԱՐՈՂՈՒԹ.

(Կապույտ եզր)

Դերասան

Երաժշտագիտ

Շեն սկսուչ

Նկարիչ

Կօշկակար

Մեսադագործ

Մեքենագիտ

Որմնադիր

Պրիֆօրկօր

Քարտադար

Քիմիագիտ.

ԲՆԱԳԻՏԿԵՆ. ԿԱՐՈՂՈՒԹԻԻՆՆԵՐ

(Գոյ կապույտ եզր)

Աստղագիտ

Բուսաբան

Դիտ

Հետախոյզ

Ուղեցոյց

Քարտեզագիտ

Հանքաբան.

ՕԳՆՈՒԹԻԻՆ

(Կարմիր եզր)

Անասուններու պաշտպան

Առողջապահ

Ազատարար

Թարգման (մանիշակ եզր)

Կարմիր խաչ

Հրշեջ.

ԵՐԿՐԱԳՈՐԾԿԵՆ. ԿԱՐՈՂՈՒԹ.

(Գոյ-դեղին եզր)

Անասնապահ

Երկրագործ

Պարտիզպան.

ՖԻԶԻԲԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹԻԻՆՆԵՐ

(Կանաչ եզր)

Հեծելանունորդ


Հրատար

Մարզիչ

Նետագիտ

Զինուսոյց.

Ա. գաւառաւար



1. Լուղորդի մը ազատարար գօտի մը նետել 10 մէթր հեռուէն:

2. Զուրին մէջ հանուիլ:

3. Զուրին մէջ սուզուիլ և 3 մ. խորէն առարկայ մը հանել:

4. Արուեստական շնչառութեան մէթոտները գիտնալ:

5. Նախնական դարմանի մէջ վարժ ըլլալ եւ ամէն տեսակ արկածեալներ ազատելու միջոցները գիտնալ:

Ա. մրաւէն



1. Բանակումի բոլոր աշխատանքներուն մէջ վարժ ըլլալ:

2. Կացին մը սրել և գործածել գիտնալ:


3. 15-20 ս. տրամագիծով ծառ մը տապալել որոշուած ուղղութեամբ մը:

4. Կապերու աշխատանքներուն մէջ վարժ ըլլալ. գիտնալ երկու գաւազան իրար կապել, խաչ մը շինել, ջուանի մը մաշած ծայրերը նորոգել:

5. Կամուրջ մը շինել որ կարենայ 100 քիլօ ծանրութեան դիմանալ:

6. Հետեւեալ առարկաներէն մէկը շինել.—
Լաստ, սանդուխ, դուռ կամ տնակ մը՝ առանց
զամ գործածելու:

Անասնապահ



Այս նշանակը կը տրուի այն սկաուտին, որ առնուազն 2 ամիս ազարակի մը մէջ աշխատելով սորված է անասնաբուծութիւն:

Անասուններու պաշտպան



1. Անասուններու հանդէպ իբր բարի ընթացք մը ունեցող սկաուտ մը ճանչցուած ըլլայ:

2. Ընտանի կենդանիներուն յատկութիւնները և օգտակարութիւնները գիտնալ:

3. Անասուններու մէրջեր և սովորական

հիւանդութիւնները ճանչնալ և գիտնալ անոնց դարմանը:

4. Շունի մը վէրքը կապել:

Առողջապահ



1. Առողջապահութեան ընդհանուր օրէնքները գիտնալ:

2. Բացատրել թէ ինչու համար պէտք է լաւ վիճակի մէջ պահել՝ սիրտը, թոքերը, մորթը, ակոսները, ռտքերը, ստամոքսը, քիթը և ականջները:


3. Գիտնալ ճաշելու, շնչառութեան, քունի և մարմնական մաքրութեան առողջապահական օրէնքները:

4. Բացատրել ծխախոտին, քինեմոլութեան և գէշ սովորութեանց վնասը, և ցոյց տալ որ առողջապահական մարզանք կ'ընէ ամէն օր:

5. Փոխանցիկ հիւանդութիւնները և անոնց դարմանը գիտնալ:


6. Ցոյց տալ որ վեց ամիսէ ի վեր հիւանդութեան պատճառաւ ետ մնացած չէ իր աշխատանքէն:

Աստղագէտ



1. Ընդհանուր ծանօթութիւններ ունենալ ամբողջ տիեզերքին մասին:
2. 10 գլխաւոր համաստեղութիւնները ճանչնալ, եւ աստղերուն միջոցաւ ժամը և կողմերը գտնել:
3. Արեւի ժամացոյց մը շինել:
- 4 Ամպերուն տեսակները ճանչնալ և օդը գուշակել:
5. Օդացոյց մը շինել:

Բանակոդ



1. Մեծ բանակումի մը համար բոլոր պէտք եղած գուքերով մեկնիլ:
2. Գիտնալ բանակավայր մը ընտրել և հաստատել տիպար բանակում մը:
3. Գիտնալ ջուրը հականեխել, վրան մը նորոգել:
4. Գիտնալ բանակումի առողջապահութիւնը:
5. Առ նուազն քսան գիշեր բանակած ըլլալ տարուան միջոցին և այդ մասին մանրամասն տեղեկագիր մը պատրաստել:

Բուսարան

1. 100 տեսակ բոյս հաւաքել
և ներկայացնել զանոնք. շար-
ուած և իրենց անուններով և
օգտակարութիւններով:

2. Նկարագրել բոյսի մը
կեանքը, անոր ամէն մասերը
մանրամասն կերպով ներկա-

յացնելով:

3. Բոյսերու շնչառութեան կամ սննդառու-
թեան փորձը կատարել քննիչին առջեւ:

4. Հինգ տեսակ բժշկական բոյս ճանչնալ:

5. Ճանչնալ թունաւոր սունկերը և պտուղները:

Գծագրիչ



1. Ներկայացնել 20 տեսակ
կենդանիի գլուխ, գծուած մա-
քուր ալպօմի մը մէջ:

2. Առանց մատիտ գործածե-
լու, ներկով ծաղիկ մը գծել:

3. Պարզ տեսարան մը գծել:

4. Զրաներկէ կամ իւղա-

ներկէ աշխատութիւններ ներկայացնել:

5. Սեւ մատիտով կամ մելանով գծա-
գրութիւն մը ընել:

6. Զեռական աշխատութիւն մը պատրաստել:

Դերասան



1. 50 տողնոց արտասանու-
թիւն մը ընել:

2. Սկսուտական հանդէսի
մը մէջ յաջող կերպով կարեւոր
դեր կատարել:

Թատրոնին և բեմին ընդհա-
նուր օրէնքները գիտնալ, ինչ-
պէս նաև հրդեհի դէմ առնուելիք միջոցները:

4. Շպարուիլ և ծպտուիլ գիտնալ:

Դերձակ



1. Հագուստի մը չափերը
առնելը գիտնալ:

2. Սկսուտական շապիկ մը
կամ տափատ մը կարել:

3. Հագուստ մը կարկտել:

4. Արդուկել:

5. Դերձակի նշանակը շինել:

Դ Է Ս



1. Քիմի խաղին մէջ ցու-
ցադրուած 24 առարկաներու
առնուազն 20 հատը գրել:

2. Դէտի երեք ուրիշ խաղերը
յաջող կերպով կատարել:


3. Սպայակոյտի քարտէսը
կարդալ արագօրէն:

4. Հեռաւորութիւն, բարձրութիւն և ծանրութիւններ դատել հարիւրին քսան սխալով:

5. Պատմել յստակ կերպով սկառուտական միջադէպ մը:

6. Պզտիկ ճամբորդութիւն մը կատարել (5 քիլօմէթր), և տեղեկագիր մը տալ:

Գրօսախօս



1. Մորսի դրօշակով լուր մը դրկել արագ և կանոնաւոր գրելով 100 մէթր հեռաւորութենէ և առանց յողնութեան նշաններ ցոյց տալու:


2. Սուլիչով, լոյսով և ծուխով լուրեր դրկել յաջողութեամբ:

Թեամբ:

3. Ընդհանուր հարց եւ պատասխանները գիտնալ, ինչպէս նաեւ հեռագրական օրէնքները:

4. Մորսի խօսակցութիւններ ստանալ արագութեամբ:

Յլեբերագէտ



1. Ընդհանուր ծանօթութիւններ ունենալ ելեքտրական հոսանքին եւ անոր գործնական օգտակարութիւններուն մասին: Գիտնալ թէ ինչպէս կը գործէ սինէմայի մեքենայ մը:

2. Սովորական բիւերուն մասին լայն ծանօթութիւններ ունենալ:

3. Ելեքտրական հոսանք մը հաստատել: Շինել ելեքտրական գործիք մը (զանգակ, հեռագիր, թէլէֆօն, T. S. F. եւ այլն):

4. Գիտնալ թէ ինչ կանխազգուշութիւններ ձեռք պէտք է առնել ելեքտրական գիծ մը հաստատած ժամանակ:

Մրածեսագէտ



1. Երաժշտական նշանները եւ որոշ նուազ մը գիտնալ վարժ կերպով:


2. Հետեւեալ պայմաններէն մին անցնել. —

ա) Դիւրին եղանակ մը կարդալ:

բ) Դիւրին ձայնագրուած երգ մը կարդալ:

գ) հետեւեալ երգերը անթերի կերպով երգել՝
«Մեր Հայրենիք», «Յառաջ Նահատակ», «Բամ
Բորոտան», «Հուսին չկար», «Հայր Մեր»:

Երկրագործ



1. Ընդհանուր ծանօթու-
թիւններ ունենալ երկրագոր-
ծութեան վրայ, եւ ազարակի-
մը բոլոր աշխատանքներուն
մէջ վարժ ըլլալ:

2. Հողը բարեփոխելու, բերքը
առատացնելու եւ փնասակար միջատներու
դէմ պայքարելու միջոցները գիտնալ: Առ-
նուագն երկու տեսակ աղբ ճանչնալ:

3. Գիտնալ գործիքով հնձել եւ ազարակի
մը զանազան գործիքներով աշխատիլ:

4. Չիերք լծել եւ կառք վարել գիտնալ:

5. Կայազը եւ հաւկիթները թարմ պահելու
միջոցները գիտնալ: —

Երկարչափ-Գծագրիչ




1. Գիտնալ երկրաչափական
գծագրութեան օրէնքներ, ինչ-
պէս նաեւ գծագրութեան ա-
ռարկաներու գործածութիւնը:

2. Արագ կերպով գծագրու-
թիւ մը ընել:

- 5. Երկրաչափական ոճերը ճանչնալ:
- 5. Պղտիկ շէնք մը շինել և կամ անոր մանր օրինակը պատրաստել:
- 6. Երկրաչափական ֆորմիւլները գիտնալ:

Զինուսոյց



- 1. Ինքզինքը պաշտպանել գիտնալ գաւազանով կամ սուրով: Պօքս եւ ըմբշամարտուիլն գիտնալ:
- 2. Խօստանալ այս կարողութիւնները միայն օգտակար պարագայի մը ի գործ դնել:

Թարգման



- 1. Հայերէնէն եւ ֆրանսերէնէն զատ ուրիշ լեզու մը գիտնալ և վարժ կերպով խօսիլ:
- 2. Նոյն լեզուով թերթէ մը յօդուած մը թարգմանել առանց բռնարանի:
- 3. Քննիչին կողմէ տրուած նիւթի մը շուրջ նամակ մը գրել:

Լուսանկարիչ



1. Լուսանկարչական գործիքի մը ինչպէս գործելը գիտնալ:

2. Լուսանկարչութեան վերաբերեալ դեղերը և անոնց գործածութեան մասին լայն տեղեկութիւններ ունենալ:

3. Ներկայացնել 12 լուսանկարներու հաւաքածոյ մը լուսանկարուած, պարզուած, եւ տպուած թեկնածուին կողմէ: Այս նկարներուն երեքը շէնքի մէջ, իսկ երեքն ալ առանց արեւի լուսանկարուած պէտք է ըլլան:

4. Մանեկգիծմով լուսանկարել գիտնալ:

Լուղորդ



1. 50 մէթր լողալ:

2. Զուրին մէջ հանուիլ:

3. Կոնակի վրայ 50 մէթր լողալ, ձեռքերը կուրծքին վրայ ծալլած:

4. Երկու տեսակ լողալու ձեւ գիտնալ:

5. Զուրը նետուիլ եւ սուզուիլ:

Լրատար



1. 100 մէթր լողալ:

2. 100 մէթր վազել 14 երկ-
վայրկեանէն:

3. 1500 մէթր վազել 3
վայրկեանէն:

4. Բերանացի լուր մը տա-
նիլ 1 քիլոմէթր հեռու տեղ մը, եւ պատաս-
խանը բերել ճիշդ կերպով:

5. Իր վրայ պզտիկ նամակ մը պահել,
որը պէտք չէ գտնուի երկու խուզարկուհե-
րու կողմէ հինգ վայրկեան փնտռտուքէ վերջ:

Խոհարար



1. Երեք տեսակ օճախ շինել
եւ բացատրել անոնց տարբե-
րութիւնը:

2. Ուտելիքներու օգտակար-
ները գիտնալ և պատրաստել
ճաշացուցակ մը՝ երեք օրուան
բանակումի մը համար:

3. Առնուազն հինգ տեսակ կերակուր,
երկու տեսակ անուշեղէն եւ երեք տեսակ ըմ-
պելի պատրաստել:

4. Վարժ սեղանապետ ըլլալ:

Կահագործ




1. Տասր տեսակ ծառի փայտի հալաքածոյ մը ներկայացնել և անոնց գործածութիւնը բացատրել:

2. Կահագործութեան վերաբերեալ բոլոր գործիքներուն մասին լայն ծանօթութիւններ

ունենալ:

3. Փայտէ Ամբողջական աշխատութիւն մը շինել, ներկել եւ փայլեցնել զայն:

Կարմիր Խաչ



1. Լայն ծանօթութիւններ ունենալ մարդակազմութեան եւ մարդկային գործարաններուն վրայ:

2. Գիտնալ արեան շրջանը եւ արիւնահոսութեան նախ-

նական դարմանը շատ վարժ կերպով կատարել:

3. Ոսկրաբեկում եւ դարման:

4. Վէրք եւ դարման:

5. Պատգարակ շինել եւ հիւանդ փոխադրել:

6. Հետեւեալ արկածներուն դարմանը գիտնալ. — Այրուածք, խածուածք, խայթուածք.

ոսկրախախտում, ոսկրազալարում, շնչահեղ-
 ձուլթիւն, արեւահարուլթիւն, թունաւորում,
 սառում, օտար մարմիններ, աչքին, ականջին
 եւ կոկորդին մէջ:


7. Գիտնալ ջերմաչափով տաքութիւն առնել:

8. Արուեստական շնչառութիւնը գիտնալ:

9. Գիտնալ հիւանդ մը խնամել եւ անոր
 սնունդը պատրաստել:

Սոյն նշանակը վերաքննելի է ամէն տարի:

Կօճկակար



1. Ծանօթութիւններ ունե-
 նալ կաշեգործութեան մասին:

2. Կաշի կտրել եւ կօշիկ մը
 ձեւել:

3. Կօշիկ մը նորոգել եւ
 ձեռնոց մը շինել:

Հանքարան




1. Ընդհանուր ծանօթու-
 թիւններ ունենալ երկրագուն-
 դին կադմութեան եւ անոր
 յաջորդական խաւերուն մասին:

2. Ծանօթութիւններ ունե-
 նալ զանալան ժայռերուն կադ-
 մութեան վրայ:

5. 25 տեսակ քարահանքերու հաւաքածոյ մը կազմել եւ բացատրել անոնց յատկանիշերը:

4. Երկրաբանական քարտէս մը վարժ կերպով կարդալ:

Հեծելանուորդ



1. Հեծելանիւնստիլ, դառնալ, 8 մը շինել, և չկեցած իջնել:

2. Երկրորդ մեքենայ մը քշել իրենինին հետ միասին:

3. Հեծելանիւի մը մեզենագիտութեան մէջ վարժ ըլլալ:

4. Սպայակոյտի քարտէս մը կարդալ եւ առաջնորդուիլ:

5. 100 քիլօմէթրնոց ճամբորդութիւն մը կատարել 12 ժամուան մէջ, եւ վերադարձին մանրամասն տեղեկագիր մը ներկայացնել:

Հեռագոս



1. Բանակողի նշանակը ունենալ:

2. Մէկ շաբթուայ ճամբորդութիւն մը կատարել քալելով եւ բանակելով, պատրաստելով սննդեղէնը, եւ առնուազն 150 քիլօմէթր կտրել մէկ շաբաթէն:

3. Ճամբորդութեան գիրքը պատրաստել մէթոտիկ կերպով պատմելով ճամբորդութիւնը, ճամբուսն պատահարները, տեսարանները, ապրուստին գինը, բանակավայրերու յարմարութիւնը. բնակիչները եւ իրենց սովորութիւնները. տեղական տօները, երկրին հարրստութիւնը եւայլն. գիրքին վիճակը մեծապէս կ'ազդէ քննութեան վրայ:

Հետախոյզ



1. Գիտնալ հետախուզական զանազան խաղեր եւ սորվեցնել զանոնք սկառտներուն:

10 կենդանիներու հետք ճանչնալ եւ անոնց հետեւիլ գիտնալ:

3. Աչքերը դոց. շօշափելով ճանչնալ զանազանառարկաներ:

4. Մէկ վայրկեան անշարժ, եւ անխօս մնալ ուրիշ սկառտի մը դէմ որ ամէն միջոց ի գործ պիտի դնէ (անխօս) խնդացնելութեկնածուն:

Հրեղ



1. Գիտնալ հրդեհի ազդանըշանը տալ եւ տեղեկացնել հրշէջները:

2. Գիտնալ բազմութիւնը կասեցնել:

3. Գիտնալ թէ ինչպէս կը

գործեն հրդեհի ջուրի աղբիւրները, գիտնալ
գործածել հրշէջներու գործիք մը:


4. Այրուող տան մը մէջ, գիտնալ ձեռք
առնուելիք միջոցները:

5. Կազերով հրդեհ մարել գիտնալ:

6. Սանդուխէ մը մագլցիլ, բռնով մը վար
իջնելով:

7. Վարժ «կարմիր խաչ» ըլլալ:

Մարզիչ



1. Առողջապահական օրէնք-
ներուն մասին լայն ծանօթու-
թիւններ ունենալ:

2. Լաւ մարզիկ ըլլալ:

3. Շուէտական մարզանք
գիտնալ եւ բանալու մի մը
ընթացքին վարել խուճիկն մարզանքը:

4. Վարժ կերպով սանդուխէ մը վեր բարձ-
րանալ:

5. Ծառէ մը վեր մագլցիլ:

6. Նիզակ նետել կամ գանազան մարզա-
կան փորձեր կատարել վարժ կերպով:

Մետադագործ



1. Երկաթէ գործիք մը շինել:
2. Մետաղի կտոր մը տա-
բակցնել եւ կորացնել. ծակել,
բարակցնել, եւ տաշել:
3. Երկու կտոր իրարու միա-
ցընել:
4. Ծակ մը նորոգել:

Այս նշանակը կը տրուի նաև այն սկաուտ-
ներու, որոնք մետաղագործի մը մօտ կ'աշխա-
տին եւ իրենց կողմէ շինուած սիրուն առար-
կայ մը կը ներկայացնեն քննիչին (ոսկերիչ,
եւալն):

Մեքենագէտ




1. Կարդալ ճարտարարուես-
տական գծագրութիւն մը:
2. Շոքեշարժ մեքենաներու
վրայ լայն ծանօթութիւն ու-
նենալ:
3. Հետեւեալ մեքենաներէն
մին լաւ ճանչնալ, շարժման
մէջ դնել եւ կեցնել. գիտնալ անոնց աւրուե-
լուն պատճառը: (Ինքնաշարժ, մօթօսիքլէթ:
երկրագործական մեքենայ, շոքեշարժ եւայլն),

Նաւավար



1. 50 մէթր լողալ:
2. Թիավարել և ղեկավարել գիտնալ:
- 3 20 մէթր հեռուէն անուորդ կապ մը նետել քարափ:
4. Նաւակ մը նորոգել:
5. 10 քիլոմէթր ճամբորդութիւն մը կատարել նաւակով կամ առագաստանաւով եւ տեղեկագիր մը պատրաստել:

Նետաձիգ



1. Նետ մը եւ աղեղ մը շինել:
2. 50 մէթր հեռուէն նշան առնել եւ յաջողութեամբ նետը արձակել նշանակէտին մօտ (5 փորձ):
4. Երեք նետ արձակել օդը շարունակաբար, երբ առաջինը գետին չէ ինկած տակաւին:
4. Լաւ «լասս» նետել եւ առանց զլխարկի սկառւտ մը բռնել 5 մէթր հեռուէն:

Շէն Սկառւոյ




1. Իբր զուարդ սկառւոյ մը ճանչցուած ըլլայ ընկերներէն: Զուարճացնել դանոնք առանց անկրթութեան եւ առանց անկարգապահութեան:

2. Քառորդ ժամուայ յայտազիր մը պատրաստել (պար, երգ, արտասանութիւն):

3. Սկառւոյական թատերգութիւն մը պատրաստել:

4. Լաւ՝ երգել եւ սկառւոյական երեք պար գիտնալ:

Որմնագիր



1. Շաղախել:

2. Որմնագիրի գործիքները գործածել:

3. Պզտիկ պատ մը հիւսել:

4. Փուռ մը շինել:

5. Շաղախով պզտիկ աւազան մը շինել:

Ուղեցոյց



1. Ընտրուած շրջանակին մասին ընդհանուր տեղեկութիւններ ունենալ և անծանօթ մը առաջնորդել գիշերանց կամ ցերեկը:

2. Փարիզի համար գիտնալ գետնուղիի, հանրակառքի բոլոր գիծերը, ինչպէս նաեւ կառավարական շէնքերը:

3. Գիտնալ բնակած շրջանակին քաղաքապետարանը, ոստիկանատունը, պանդոկները և հիւանդանոցները, հեռագրատունը եւայլն:

4. Սպայակոյտի քարտէս մը կարդալ եւ առաջնորդուիլ:

5. Սկառուտական խումբի մը համար բանակումի յայտագիր մը պատրաստել, առաջնորդել զանոնք իր պատրաստած քարտէսին միջոցաւ:

6. Գիտնալ իր բնակած վայրին պատմութիւնը և զանազան յիշատակարանները:

Պարտիզան



1. Հող մը խնամել եւ վեց տեսակ բոյս մեծցնել յաջողութեամբ:


2. Յաջողութեամբ ծառի պատուաստ մը կատարել:

3. Ընտանի կենդանիներուն կեանքը և յատկանիշները գիտ-

նալ:

4. Պտուղ քաղել, զանոնք պահել եւ ծախել գիտնալ:

Պոխօլէտ



1. Խումբին, խմբակին և ըսկառու ընկերներուն զանազան օգտակար գործերով ծառայութիւններ մատուցած ըլլալ:

2. Փայտով կամ խաւաքարտով սիրուն առարկայ մը շինել:

3. Գուռ մը ներկել:


4. Ելեքտրական գործիք մը շինել:

5. Կարասի մը նորոգել:

6. Ապակի կտրել, և փոխել կտտրած ապակի մը:


7. Լուացք եւ տնական մաքրութիւն ընել:

Քարտուղար




1. Լաւ գիր ունենալ և կատարեալ հայերէն գիտնալ:
2. Տրուած նիւթի մը շուրջ նամակ մը գրել:
3. Վեց ամիս խուժբին քարտուղարի պաշտօնը կատարած ըլլալ:
4. Գիտնալ մատակարարութիւն, հաշուապահութիւն կամ մեքենագրութիւն:

Քարտաագէտ



1. Անկանոն գետնի մը քարտէսը գծել (չափով):
2. Երկրաչափական միջոցներով բարձրութիւն գտնել:
3. Սպայակոյտի քարտէսը կարդալ և մեծցնել զայն:
4. «Քոօքի թօրոկրաֆիք» պատրաստել: 20 վայրկեանի մէջ տեսարան մը գծագրել կարեւոր մանրամասնութիւններով:

Քարտուագէտ -- Գծագրիչ



1. Յոլոր երկրաչափական գրծագրութիւնները գիտնալ:

2. Գիտնալ բարձրութիւն, ծանրութիւն և ծաւալ մը գրտնելու երկրաչափական ֆորմիւլները:

3. Առարկայի մը յատակագիծը և «քոթիւն պատրաստել:

Քիմիագէտ




Քիմիագէտի նշանակը կը տրուի այն սկառուտին, որ մանրամասնօրէն կը գիտնայ քիմիական բոլոր մարմինները եւ անոնց յատկութիւնները, օրէնքներ եւ գործնական հե-

տեւանքները:

Թեկնածուն պէտք է պատրաստէ երկու տեսակ կազ եւ կատարէ մէկ տարրալուծութիւն, ինչպէս նաեւ բիւրեղացում:


ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ԱՍՏՂ



Ա. Գայրուկները կ'ունենան վեց պոչաւոր ներսակ աստղ դեղին ասուիի վրայ. ամէն անգամ որ կը շրացնեն մեկ տարեշրջան՝ գայրուկներու շարքին մէջ:


Բ. Սկառսները կ'ունենան քմիելոյն աստղը, կանանց ասուիի վրայ:

Գ. Երեցները կ'ունենան լոյնպէս միելոյն աստղը կարմիր ասուիի վրայ:



Դ. Հինգ տարուան սկառսները կ'ունենան ոսկեգոյն եւ հինգ պոչաւոր աստղ մը:


ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՆՇԱՆԱԿ



Սոյն նշանակը կը տրուի գործադիր խորհուրդին որոշուելով այն անձերուն որոնք կարենոր ծառայութիւն մը կը մատուցանեն ֆրանսահայ սկառսական շարժման:

ԱՐԺԱՆԻՔԻ ՇՔԱՆՇԱՆ

Սոյն շխանչանը կը տրուի, Ընդհանուր Պետիկ կողմէ այն խնդրապետերուն կամ պաշտօնատարներուն որոնք կարելու ծառայութիւններ կը մատուցանեն շարժումին: Շխանչանը ստանալու համար պէտք է հինգ տարուան սկստուս ըլլայ



THE UNIVERSITY OF CHICAGO PRESS

THE UNIVERSITY OF CHICAGO PRESS
54 EAST LAUREL AVENUE
CHICAGO, ILLINOIS 60607
U.S.A.



915 5 30000